«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 10

19.03.2026թ.

1. ՀԱԱՀ «Զարթոնք» հանգստյան տան աշխատանքների կազմակերպման ընթացքի, առկա խնդիրների և բարելավման ուղիների վերաբերյալ

1.1. Ընդունել ի գիտություն

1.2. Հանձնարարել համալսարանի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին սեղմ ժամկետներում կազմակերպել քննարկումներ և մինչև ս.թ. ապրիլի 10-ը ՀԱԱՀ տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Ա. Հովհաննիսյանին ներկայացնել Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տան գործունեության բարելավման վերաբերյալ առաջարկություններ:

2. ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի որակավորման բարձրացման գործընթացի վիճակի և խնդիրների վերաբերյալ

2.1. Ընդունել ի գիտություն:

2.2. Բարեխիղճ աշխատանքի և դասավանդման օրինակելի փորձի համար ՀԱԱՀ հետևյալ աշխատակիցներին ներկայացնել դրամական խրախուսման՝

Համբարձումյան Հասմիկ – 25 000 դրամ,

Պետոյան Գայանե – 25 000 դրամ,

Սարգսյան Վահագն – 25 000 դրամ,

Բաղալյան Աստղիկ – 50 000 դրամ:

Ա. Բաղալյանին, բացի դրամական խրախուսումից, պարգևատրել նաև պատվոգրով:.

2.3. Հանձնարարել հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար Ս. Ավետիսյանին՝ պարգևատրման ներկայացված ՀԱԱՀ աշխատակիցների վերաբերյալ տեղեկատվությունը տեղադրել համալսարանի պաշտոնական կայքէջում:

2.4. Հանձնարարել ՈԳԱԿ տնօրեն Ա. Դաշտոյանին իրականացված հետազոտությունների արդյունքները սեղմ ժամկետում տրամադրել ստորաբաժանումների ղեկավարներին:

3. Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության, Ագրոնոմիական, Ագրոբիզնեսի և տնտեսագիտության և Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետների ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի և առկա խնդիրների վերաբերյալ

Ընդունել ի գիտություն:

4. ՀԱԱՀ «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» գիտական պարբերականի տարեկան թողարկումների վերաբերյալ

4.1. «Կրճատել «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» գիտական պարբերականի տարեկան թողարկումների քանակը՝ մեկով նվազեցնելով հայերեն և ռուսերեն լեզուներով միասնական համարներից մեկը և թողարկվող ընդհանուր համարների քանակը սահմանելով 3, որոնցից՝

- 1-ը՝ հայերեն և ռուսերեն լեզուներով միասնական,
- 2-ը՝ անգլերեն լեզվով:

4.2. Հանձնարարել գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Ծպնեցյանին՝ «Ագրոգիտություն և տեխնոլոգիա» գիտական պարբերականում հրատարակման ներկայացված հոդվածների գրախոսման համար սահմանել խրախուսման համակարգ՝ ներառելով «ՀԱԱՀ պրոֆեսորադասախոսական և գիտական անձնակազմի գիտական գործունեությունը խրախուսող լրավճարների հաշվարկման և վճարման կարգ»-ում:

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Հ.Ս. ՋԱՔՈՅԱՆ

ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ